

**Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Ն Ե Ր**  
**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

**1. Ինչո՞վ է պայմանավորված բնական գազի սակագների բարձրացումը:**

Բնական գազի սակագների բարձրացումը պայմանավորված է հիմնականում հետևյալ գործոններով՝

ա) հանրապետություն ներկրվող բնական գազի գնի շուրջ 17% բարձրացմամբ (հազար խորանարդ մետրի համար 154 ԱՄՆ դոլարից՝ 180 ԱՄՆ դոլար՝ առանց ավելացված արժեքի հարկի)։

բ) ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կտրուկ բարձրացմամբ: Այսպես, եթե գործող սակագնի հաշվարկում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը կազմում էր 303.69 դրամ, ապա սահմանվող սակագնի հաշվարկի հիմքում դրված է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում ընդունված 386.41 դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը.

գ) բնական գազի սպառման ծավալների շուրջ 20% նվազմամբ.

դ) ընկերության կողմից իրականացված ներդրումների փոխհատուցման (շահույթի և մաշվածության տեսքով) անհրաժեշտությամբ և գազամատակարարման համակարգի ընդլայնմամբ պայմանավորված՝ շահագործման և պահպանման ծախսերի ավելացմամբ:

**2. Ներկրվող բնական գազի գնի 17% աճի պայմաններում, ինչո՞վ է բնակչության սակագինն աճում 37.5%-ով:**

Բնակչությանը վաճառվող բնական գազի սակագնի բարձրացումը պայմանավորված չէ միայն սահմանի վրա բնական գազի գնի ավելացմամբ: Այն պայմանավորված է նաև վերը նշված գործոններով: Այսպես, բնակչությանը վաճառվող բնական գազի գնի աճի շուրջ 14.5%-ը պայմանավորված է սահմանի վրա գազի գնի թանկացմամբ, 18%-ը՝ փոխարժեքի փոփոխությամբ և 5%-ը՝ ներդրումների վերադարձի ապահովմամբ և գազամատակարարման ցանցի ընդլայնմամբ պայմանավորված՝ շահագործման և պահպանման ծախսերի ավելացմամբ և այլ գործոններով: Միաժամանակ հարկ է նշել մեկ այլ հանգամանք. երբ 2009 թվականի ապրիլի 1-ից սակագներն ուժի մեջ մտան, ֆինանսական շուկայում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների հետևանքով ԱՄՆ դոլարի փոխարժեքն արդեն շուրջ 372 դրամ էր՝ հաշվարկային 303.69-ի դիմաց: Ուստի, եթե բնակչության համար սակագինը սահմանված լիներ 316 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, ապա բնակչությունը հազար խորանարդ մետր բնական գազի համար 96 հազար դրամի փոխարեն ապրիլ ամսվանից սկսած արդեն պետք է վճարեր 118 հազար դրամ: Եթե սահմանված լիներ նշված սակագինը, ապա սակագնի աճը կկազմեր ընդամենը 12% (132000/118000):

**3. Ինչո՞վ է բացատրվում այն հանգամանքը, որ բնակչությանը վաճառվող բնական գազի սակագինը գերազանցում է խոշոր սպառողներին վաճառվող բնական գազի սակագնին:**

ՀՀ գազամատակարարման համակարգը բաղկացած է բարձր, միջին և ցածր ճնշման գազատարներից, որոնց շահագործումը և սպասարկումը պահանջում է իրարից զգալիորեն տարբերվող ծախսեր: Խոշոր սպառողները հիմնականում բարձր և միջին ճնշման գազատարներից օգտվող բաժանորդներ են: Մինչդեռ բնակիչները հանդիսանում են գազամատակարարման համակարգի վերջին օղակի սպառողներ և նրանց գազամատակարարումը պահանջում է ավելի մեծ ծախսեր և ներդրումներ: Այսպես, թեև բնակչությունը սպառում է մատակարարված գազի ընդամենը 38%-ը, նրան բաժին է ընկնում համակարգի ամբողջ ծախսերի շուրջ 60%-ը և ներդրումների գերակշիռ մասը:

**4. Ինչո՞վ է պայմանավորված միննույն գազամատակարարման համակարգի տարբեր սպառողների համար սակագնի տարբեր արժույթների կիրառումը:**

Ընկերության ծախսերի գերակշիռ մասը (80%) դոլարային ծախսեր են, և ընկերության ֆինանսական կայունությունն ապահովելու համար նպատակահարմար է ընկերության բոլոր բաժանորդների համար ԱՄՆ դոլարին համարժեք դրամով սակագնի սահմանումը, սակայն բնակիչ-բաժանորդների համար յուրաքանչյուր ամիս սակագնի վերահաշվարկի իրականացման աննպատակահարմարությունից և անհարմարություններից ելնելով՝ բնակչության համար սակագինը սահմանվում է դրամով և չի վերահաշվարկվում մինչև սակագնի հաջորդ վերանայումը:

**5. Ճիշտ է, որ ընդունված սակագնում շահույթի ավելացում չի նախատեսվել:**

-2002-2008թթ. Ընթացքում «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի զուտ շահույթը կազմել է ընդամենը 18.6 մլրդ. դրամ: Նույն ժամանակահատվածում «Հայֆուսգազարդե ՓԲԸ-ի կողմից իրականացվել է 750 մլն ԱՄՆ դոլարի (246 մլրդ. դրամ) ներդրումներ ամբողջ համակարգի, Հրազդան-5-րդ էներգաբլոկի և Իրան-Հայաստան գազատարի գծով:

Իր ողջ գործունեության ընթացքում Ընկերությունն բաժնետերերին շահաբաժին երբևէ չի հատկացրել և առաջացած շահույթի գումարներն ամբողջությամբ ուղղվել են գազի համակարգում ներդրումների իրականացմանը: Եվ նույնիսկ այս պայմաններում առաջարկվող սակագնի հաշվարկներում գործող սակագնում ներառվածի նկատմամբ շահույթի ավելացում չի նախատեսվել:

Բացի այդ, 2010 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող սակագներում հաշվի չի առնվել ընկերության 2009 թվականի կրած շուրջ 4.5 մլրդ դրամի վնասը:

**6. Իրանական գազը կարող է իրական այլընտրանք հանդիսանալ ռուսական գազին:**

«Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազ չի ներկրում և պայմանագրային կողմ չի հանդիսանում: Պայմանագիրը կնքված է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և Իրանի ազգային գազի արտահանման ընկերության միջև:

Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց և ըստ էության գին գոյություն չունի: Իսկ եթե հարաբերակցությունը վերածենք գնի, ապա իրանական գազը ավելի թանկ է մեր

ներկրման գնից:

**7. Արդյոք հայ սպառողը գազը սպառում է աշխարհի ամենաթանկ գներից մեկով:**

Այսօր հայ սպառողը գազը սպառում է աշխարհում ամենամատչելի գներից մեկով:

«Գազպրոմ» ընկերության կողմից 2008թ-ին ԱՊՀ և Եվրամիության երկրներ բնական գազի մատակարարման միջին գինը կազմել է 300-350 \$/հազ.խմ: Միջազգային Էներգետիկ Գործակալության կողմից հրապարակված տվյալների համաձայն՝ Եվրամիության թվով 22 երկրներում 2009թ-ին բնակչությանը մատակարարվող բնական գազի միջին գինը կազմել է շուրջ 900 ԱՄՆ դոլար/հազ.խմ, իսկ Էլեկտրաէներգետիկայի և արդյունաբերության ոլորտների համար՝ շուրջ 500 ԱՄՆ դոլար/հազ.խմ: Եվ սա այն պայմաններում, երբ նշված գրեթե բոլոր երկրներն ունեն կամ գազի սեփական արդյունահանման կամ տարանցման հնարավորություն, որը Հայաստանը չունի: Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ Եվրամիության բոլոր երկրներում բնակչության առաքվող բնական գազի գինը 2.5 - 3 անգամ բարձր է ներկրվող բնական գազի գնից: